

Այսպիսով, հանրայնությունը հանդիսանում է քրեական դատավարության ինքնուրույն սկզբունք, որի հիմնական պահանջն է՝ իրավասու սուբյեկտների պարտականությունը ի պաշտոնե հարուցելու քրեական հետապնդում, իրականացնելու քննություն և լուծելու քրեական գործը:

## **ПУБЛИЧНОСТЬ КАК ПРИНЦИП УГОЛОВНОГО ПРОЦЕССА**

***А. С. ГАМБАРЯН***

В статье рассматривается этимология развития идей о принципе публичности, точка зрения, функциональное соответствие и структура принципа публичности выдвинутая в теории уголовного дела.

## **PUBLICITY AS A PRINCIPLE OF CRIMINAL PROCEDURE**

***A. S. GHAMBARYAN***

The article was exactly investigated the genesis of the development of the ideas about the principle of the publicity in the theory of the Criminal Procedure; notion, functional appropriation and the structure of the principle of the publicity.

## **ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ**

**Մ. Յ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*Գավառի պետական համալսարանի դասախոս,  
իրավագիտության թեկնածու*

Քրեական դատավարության մասնակիցների սուբյեկտիվ իրավունքների, ազատությունների և օրինական շահերի համապարփակ դատական պաշտպանությունը ենթադրում է նաև վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման ինստիտուտի արդյունավետ գործառնություն: Վերաքննիչ վարույթը հանդիսանում է անձի դատական պաշտպանության իրավունքի բովանդակությունից բխող՝ դատական ակտերի բողոքարկման իրավունքի իրացմանն ուղղված ինստիտուտ: Դատական ակտերի վերաքննության կարգով բողոքարկման իրավունքը ինքնին ենթադրում է համապատասխան օրենսդրական մեխանիզմների առկայություն, որը կապահովի բողոքարկման իրավունքի արդյունավետ իրականացումը:

Վերաքննիչ քրեական դատարանի կողմից քրեական գործերի (դատական ակտերի) վերանայման սահմանների վերաբերյալ հարցի արդյունավետ քննարկումը ենթադրում է վերաքննության էության և նպատակների պարզաբանում: Այսպես, վերաքննության կարգով դատական ակտի բողոքարկումը դատական սխալի վերացման միջոց է, որը միաժամանակ ապահովում է առաջին ատյանի

դատարանում արդար դատաքննության իրավունքի իրացումը՝ վերաքննիչ դատարանի կողմից արդարադատության իրականացման միջոցով: Վերաքննության հիմնական խնդիրն առաջին ատյանի դատարանի դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության ստուգումն է, որն իր հերթին սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության դատական ձևի ինքնուրույն դրսևորում է և իրականացվում է դատական ակտի բողոքարկման արդյունքում: Ինչպես նշում է Ի. Մ. Ջայցևը, «Դատական ակտերի բողոքարկումը դատական սխալի բացահայտման և ուղղման գործուն միջոց է, որը երաշխավորում է դատական պաշտպանության իրավունքի իրացումը»[1]:

Վերաքննություն տեղի ունի, որպես իրավական երևույթ, ճիշտ ընկալելու համար պետք է դիտարկել երկու տեսանկյունից. որպես դատական ակտերի վերանայման մեխանիզմ և որպես քրեական դատավարության ինքնուրույն փուլ:

Թե տեսության և թե օրենսդրության մեջ վերաքննության մեխանիզմը կարող է շատ տարբեր դրսևորումներ ունենալ՝ սկսած այնպիսի մոդելներից, որոնցով վերանայող դատարանն ազատ է ցանկացած փաստ կամ ապացույց կրկին քննության առնելու հարցում՝ անկախ բողոքի սահմաններից (լրիվ վերաքննություն), վերջացրած այնպիսի մոդելներով, որոնցով դատարանը խստորեն սահմանափակված է բողոքի շրջանակներով և որևէ լրացուցիչ հանգամանքի կամ ապացույցի, որը բողոքում մատնանշված չէ, անդրադառնալ չի կարող (սահմանափակ վերաքննություն): Ամեն դեպքում, վերաքննությունը դատական վերանայման այլ մեխանիզմներից տարբերվում է գործով ապացույցների զանգվածը լրացնելու և ըստ այդմ գործի փաստական կողմն ուղակիորեն վերանայելու իրավական հնարավորությամբ: Որպես քրեական դատավարության ինքնուրույն փուլ, վերաքննիչ վարույթը կարելի է բնորոշել հետևյալ կերպ. «Մինչև գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը դատական սխալն ուղղելու ու դատական ակտի մեջ շարադրված հետևությունների՝ գործով փաստական համապատասխանությունն ապահովելու նպատակով վերաքննիչ դատարանի և այլ իրավասու սուբյեկտների՝ օրենքով կարգավորված գործունեություն, որն ավարտվում է վերաքննիչ դատարանի կողմից նոր եզրափակիչ որոշման կայացմամբ»[2]:

Վերաքննության մոդելի ընտրության հարցում ՀՀ օրենսդրի մոտեցումը բնութագրվում է երկու «ծայրահեղությամբ»: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո /12.01.1999թ./ մինչև «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 28.11.2007թ. ՀՀ օրենքի» ուժի մեջ մտնելը /27.12.2007թ./ գործող վերաքննության մոդելը լրիվ վերաքննության դասական օրինակ էր, որով վերաքննիչ դատարանը ընդհանրապես կաշկանդված չէր վերաքննիչ բողոքով[3]: Միակ սահմանափակումը պայմանավորված էր դեպի վատթարացում անթույլատրելիության սկզբունքով, այն է՝ պաշտպանության կողմից բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ամբաստանյալի վիճակը չէր կարող վատթարացվել[4]:

Այս մոդելը ինքնին «ծայրահեղական» էր նախ այն առումով, որ քրեական գործով առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատական ակտի իրավաչափությունը ամբողջությամբ կասկածի տակ էր դրվում՝ անկախ վերաքննիչ բողոքի հիմքերի շրջանակից: Բացի այդ, այս մոդելը ենթադրում էր

քրեական գործի ըստ էության կրկնակի քննություն, որի անհրաժեշտությունը հիմնականում բացակայում էր և իմաստագրվում էր առաջին ատյանում քրեական գործի քննության ինստիտուտը ամբողջությամբ: Այսինքն, ի՞նչ իմաստ ունի առաջին ատյանում գործի քննությունը, երբ անկախ դատավարության կողմերի կողմից բարձրացված նյութական և դատավարական իրավունքի նորմերի ենթադրյալ խախտումներից, վերաքննիչ դատարանում քրեական գործը քննվում էր ըստ էության, և կայացվելիք դատական ակտը կարող էր ամբողջությամբ կամ մասնակի առնչվել վերաքննիչ բողոքում նշված հիմքերին և կարող էր ընդհանրապես չառնչվել: Փաստորեն, ամբողջ ծավալով գործի քննության, ինչպես նաև գործով ներկայացված բոլոր ապացույցների հետազոտության արդյունքում վերաքննիչ դատարանը նմանվում է առաջին ատյանի դատարանի:

Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ դեպի վատթարացում անթույլատրելիության սկզբունքի առկայությունը, այն է՝ պաշտպանության կողմից բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ամբաստանյալի վիճակը վատթարացվելու արգելքը, ոչ բոլոր դեպքերում էր, որ կարող էր վերաքննիչ դատարանի համար կաշկանդող հանգամանք հանդիսանալ, քանի որ, եթե գործով բացի ամբաստանյալից կամ նրա պաշտպանից վերաքննիչ բողոք էր բերել նաև մեղադրողը կամ տուժողը, ապա վերաքննիչ դատարանը կարող էր կայացնել նաև անձի վիճակը վատթարացնող դատական ակտ:

Վերաքննության մոդելի ընտրության հարցում ՀՀ օրենսդրի հաջորդ մոտեցումը, որը գործում է «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 28.11.2007թ. ՀՀ օրենքի» ուժի մեջ մտնելուց հետո /27.12.2007թ./, բնութագրվում է նրանով, որ այս մոդելի պայմաններում վերաքննիչ քրեական դատարանը կաշկանդված է բողոքի հիմքերով և հիմնավորումներով և կողմը չի կարող ներկայացնել նոր ապացույցներ հետազոտելու պահանջ, եթե չհիմնավորի, որ նախկինում նման միջնորդություն ներկայացնելու հնարավորություն չի ունեցել: Այսպես, վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում՝ գործում եղած, իսկ բացառիկ դեպքերում՝ նաև լրացուցիչ ներկայացվող ապացույցներով: Այս իրավանորմից, *inter alia*, բխում է, որ վերաքննիչ դատարանն իրավունք չունի իր դատական ակտը հիմնավորել այնպիսի էական փաստարկումներով, որոնք ներկայացված չեն վերաքննիչ բողոքում[5]: Բացառիկ դեպքեր են հանդիսանում կողմի բողոքի, ինչպես նաև մյուս կողմի բողոքի կապակցությամբ տրված պատասխանների հիմքերը հաստատելու համար դատարան ներկայացվող նոր նյութերը, ինչպես նաև փորձաքննություն նշանակելու վկային կամ փորձագետին դատարան կանչելու միջնորդություններ ներկայացնելը, եթե նրանք հիմնավորում են, որ օբյեկտիվորեն հնարավորություն չեն ունեցել ներկայացնելու այդ նյութերը, կանչելու վկային կամ փորձագետին, ինչպես նաև առաջին ատյանի դատարանում միջնորդելու նշանակել փորձաքննություն, կամ հիմնավորում են, որ ներկայացված միջնորդությունն առաջին ատյանի դատարանի կողմից մերժվել է անհիմն:

Վերոգրյալից հետևում է, որ օրենսդիրը վերաքննիչ դատարանին իրավունք է վերապահել նոր փաստական հանգամանք հաստատված համարել երկու դեպքում՝ երբ դա հնարավոր է առաջին ատյանի դատարանի կողմից հետազոտված

ապացույցների հիման վրա և, երբ հետազոտվել են վերաքննիչ դատարան ներկայացված լրացուցիչ ապացույցներ: Ընդ որում, վերոնշյալ դեպքերից առաջինի վրա հասնելու համար անհրաժեշտ է, որպեսզի՝ վերաքննիչ բողոքում վիճարկվի որևէ փաստական հանգամանք, և վերաքննիչ դատարանը հանգի եզրակացության, որ տվյալ փաստական հանգամանքի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին ատյանի դատարանն ակնհայտ սխալ է թույլ տվել: Սա արդեն վճարբեկության մոդելի հետ սահմանակցող մոդել է: (Այս կանոնից բացառություն են կազմում առաջին ատյանի դատարանում արագացված կարգ կիրառված լինելու դեպքերը, որը այլ ուսումնասիրման առարկա է):

Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանում հաստատված փաստական հանգամանքները ընդունվում են որպես հիմք, բացառությամբ այն դեպքի, երբ բողոքում վիճարկվում է որևէ փաստական հանգամանք, և վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացության, որ տվյալ փաստական հանգամանքի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին ատյանի դատարանն ակնհայտ սխալ է թույլ տվել: Նման դեպքերում վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստական հանգամանք կամ հաստատված չհամարելու ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքը, եթե առաջին ատյանի դատարանի կողմից հետազոտված ապացույցների հիման վրա կամ լրացուցիչ ներկայացված ապացույցներով հնարավոր է հանգել նման եզրակացության: Եթե առաջին ատյանի դատարանը հետազոտված ապացույցների հիման վրա դատական ակտում եզրակացության չի հանգել որևէ փաստական հանգամանքի վերաբերյալ, ինչը պարտավոր էր անել, ապա վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստական հանգամանք:

Այսպիսով, գործող մոդելի պարագայում վերաքննիչ քրեական դատարանը կաշկանդված է վերաքննիչ բողոքի հիմքերով և հիմնավորումներով, և քրեական գործի վերաքննությունը չի կարող դուրս գալ այդ շրջանակից, որպիսի հանգամանքը իր իմպերատիվ արտացոլումն է գտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածում: Վերաքննիչ բողոքի հիմքը դատական սխալն է՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա և նոր երևան եկած կամ նոր հանգամանքները: Վերաքննիչ բողոքի հիմնավորում ասելով պետք է հասկանալ վերաքննիչ բողոքի հիմքերը հաստատող փաստական տվյալների ամբողջությունը:

Այս մոդելը առաջին հայացքից ունի բավարար արդյունավետություն ինչպես քրեական դատավարության մասնակիցների բողոքարկման իրավունքի լիարժեք իրացման տեսանկյունից, այնպես էլ առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված նյութական կամ դատավարական նորմերի խախտումների վերացման տեսանկյունից և կարող է ապահովել ՀՀ դատական իշխանության առջև դրված հիմնական խնդրի լուծումը՝ արդարադատության իրականացումը: Մասնավորապես, նման մոտեցման համար հիմք կարող է հանդիսանալ, այն որ դատավարության մասնակիցները ի դեմս պաշտպանի կամ մեղադրողի, հանդիսանում են համապատասխան իրավական գիտելիքներ ունեցող անձինք և կարող են օբյեկտիվորեն բարձրացնել քրեական գործով վերանայման անհրաժեշտություն

ունեցող հանգամանքները, որի համար ունեն բավարար մեխանիզմներ (և կբացառվի քրեական գործի անհարկի կրկնակի քննությունը):

Սակայն, վերաքննիչ քրեական դատարանի կողմից գործի քննության սահմանների նման իմպերատիվ սահմանափակումը, առկա հարաբերությունների տեսանկյունից, ունի որոշակի խնդրահարույց տարրեր: Մասնավորապես, իրավակիրառ պրակտիկան վկայում է, որ հաճախ ամբաստանյալը (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի), քաղաքացիական պատասխանողը, տուժողը, քաղաքացիական հայցվորը, համապատասխան ֆինանսական միջոցներ չունենալու պատճառով, չեն կարող օգտվել պատշաճ իրավաբանական օգնությունից և, հետևաբար, չեն կարող վերաքննիչ բողոքում ճիշտ ներկայացնել թույլ տրված նյութական և դատավարական իրավունքի խախտումները և հիմնավորել դրանք ու վերաքննիչ բողոք բերում են այն մասով, որտեղ չի կարող կասկածի տակ դրվել դատական ակտի իրավաչափությունը: Իսկ վերաքննիչ քրեական դատարանը, կաշկանդված լինելով վերաքննիչ բողոքի հիմքերով և հիմնավորումներով, չի կարող դուրս գալ դրա սահմաններից և վերացնել թույլ տրված նյութական կամ դատավարական իրավունքի խախտումը: Բացի այդ, հանդիպում են նաև դեպքեր, երբ հենց փաստաբանները ճիշտ հիմքով և հիմնավորմամբ վերաքննիչ բողոք չեն ներկայացնում, որպիսի հանգամանքը նույնպես հանգեցնում է համապատասխան իրավական հետևանքների: Այս հանգամանքը, որպես կանոն, պայմանավորված է ամբաստանյալի վիճակը բարելավելու պաշտպանի ցանկությամբ, այնինչ, վերաքննիչ դատարանի կողմից առկա դատական սխալի վերացումը կարող է հանգեցնել ամբաստանյալի վիճակի էական բարելավման կամ նույնիսկ արդարացման դատական ակտի կայացման: Խնդրահարույց են նաև այն դեպքերը, երբ, օրինակ, ամբաստանյալներից մեկի վերաքննիչ բողոքի հիման վրա վերացվում է թույլ տրված նյութական կամ դատավարական իրավունքի խախտումը, իսկ մյուս ամբաստանյալների մասով, որոնք վերաքննիչ բողոք չեն ներկայացրել՝ վերաքննիչ դատարանը խախտումը վերացնելու իրավասություն չունի:

Այս փաստը վկայում է նաև այն մասին, որ հասարակության իրավագակցությունը դեռևս չի հասել այն մակարդակի, որպեսզի օրենսդրի կողմից սահմանված վերաքննության այս մոդելը ստանա արդյունավետ կիրառություն:

Փաստորեն, վերոգրյալի հիման վրա կարելի է հանգել այն հետևության, որ տվյալ պարագայում առկա է իրավական բաց, որը տեսության մեջ ընդունված է անվանել իրական կամ իսկական [6]: Այսինքն, առկա իրավանորմը ամբողջությամբ չի բավարարում կարգավորման ենթակա հարաբերություններին:

Վերաքննության գործող մոդելը, առանձին վերցրած, կարող է վկայել դատական ակտերի վերաքննության կարգով բողոքարկման իրավունքի համապատասխան օրենսդրական մեխանիզմների առկայության մասին, որը, սակայն, կիրառման արդյունքում չի ապահովում բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացումը: Դատական ակտի բողոքարկման իրավունքը ենթադրում է դատական սխալի վերացման հնարավորություն՝ վերաքննիչ դատարանի կողմից արդարադատության իրականացման միջոցով: Վերաքննության հիմնական խնդիրն առաջին ատյանի դատարանի դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության ստուգումն է, որն իր հերթին սուբյեկտիվ իրավունքների պաշտպա-

նության դատական ձևի ինքնուրույն դրսևորում է և իրականացվում է դատական ակտի բողոքարկման արդյունքում: Եվ տվյալ պարագայում նման ձևով սահմանափակել քրեական գործի վերաքննության սահմանները, նշանակում է վտանգի տակ դնել արդարադատության շահը և մարդու՝ ՀՀ Սահմանադրությամբ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով սահմանված արդար դատաքննության իրավունքի իրացումը: Հարկ է նշել, որ «Դելկուրն ընդդեմ Բելգիայի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ. «... այն դեպքում, երբ պետությունն իր ազգային իրավունքում նախատեսում է վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, ապա այդ դատարաններում վարույթի ընթացում անձինք պետք է օժտված լինեն 6-րդ հոդվածի՝ արդար դատաքննության իրավունքի հիմնարար երաշխիքներով»[7]:

Տվյալ պարագայում, կարելի է ասել, որ օրենսդիրը որոշակիորեն առաջ է անցել կարգավորման անհրաժեշտություն պահանջող հարաբերություններից և սահմանել է վերաքննության այնպիսի մոդել, որը՝ պայմանավորված հասարակության իրավագիտակցության աստիճանով և պետության սոցիալ-տնտեսական վիճակով, չի կարող ունենալ արդյունավետ կիրառություն: Օրենսդրի նման մոտեցումը հետևանք է մորմատիվ իրավական ակտի պատշաճ տեսական հիմնավորման բացակայության, իրավաբանական (օրենսդրական) տեխնիկայի կանոնների պահանջների անտեսման, համապատասխան հայեցակարգերի բացակայության (կամ խիստ մակերեսային է և թերի): Այս մասին է վկայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի «Հիմնավորումը» (ընդունվել է 28.11.2007թ., որով ներդրվել է վերաքննության վերը նշված մոդելը), որը, բացի շատ ընդհանուր և կարճ նկարագրությունից, վերաքննության այս մոդելի արդյունավետության վերաբերյալ որևէ հիմնավորում չի պարունակում: Պետք է գիտակցել, որ ոչ մի բացատրական գրություն կամ տեղեկանք երբևիցե չի կարող փոխարինել գիտականորեն հիմնավորված հայեցակարգին:

Վերոգրյալի կապակցությամբ ուշադրության է արժանի այն, որ ՀՀ վճռաբեկ դատարանը, իրացնելով օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական լիազորությունը, բարձրացված հարցի շրջանակներում արտահայտել է մի շարք իրավական դիրքորոշումներ, որոնք հնարավորություն են տալիս որոշակիորեն հաղթահարել վերը նշված օրենսդրական (իրավական) բացը: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված դիրքորոշումներից բխում է, որ դատական ակտը ամեն դեպքում ենթակա է բեկանման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքերի առկայության պարագայում (դատավճիռը կայացվել է դատարանի ոչ օրինական կազմով, ամբաստանյալին չի տրվել վերջին խոսքի իրավունք, խախտվել է խորհրդակցական սենյակի գաղտնիությունը, գործում բացակայում է դատական միստի արձանագրությունը, խախտվել է գործի քննության ընդդատությունը և այլն)՝ անկախ նրանից, թե այդ հանգամանքը որպես հիմք նշվել է վերաքննիչ բողոքում՝ թե ոչ: Բացի այդ, ՀՀ վճռաբեկ դատարանը մեկնաբանելով պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները, արտահայտել է համապատասխան իրավական դիրքորոշում այն մասով, որ նշանակված

պատժի մասով բերված վերաքննիչ բողոքի շրջանակներում վերաքննիչ քրեական դատարանի կողմից արարքի իրավաբանական որակման անդրադառնալը չի կարող դիտվել որպես վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների շրջանակից դուրս գալ [8] և այլն:

Սակայն հարկ է նկատի ունենալ, որ ՀՀ վճռաբեկ դատարանը ըստ էության չի կարող ամբողջությամբ վերացնել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում քրեական գործի քննության սահմանների հետ կապված վերը նշված օրենսդրական բացը և տվյալ պարագայում անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան փոփոխություն՝ վերաքննության արդյունավետ մոդելի սահմանման համար:

Այսպիսով, վերոգրյալի լույսի ներքո, հանգում ենք այն հետևության, որ վերաքննության թե նախկին և թե գործող մոդելի ընտրության հարցում ՀՀ օրենսդրի մոտեցումները «ծայրահեղական» են և անհրաժեշտ է սահմանափակ այնպիսի մոդել, որը կբխի քրեական գործի վերաքննության էությունից, խնդիրներից, կապահովի անձանց իրավունքների լիարժեք իրացումը և կբխի արդարադատության բուն էությունից: Նման մոդել կարող է հանդիսանալ այն, որ վերաքննիչ քրեական դատարանին, բացի վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում գործը քննելու իրավասությունից, հնարավորություն տրվի ի շահ արդարադատության և մեղադրյալի, դուրս գալ վերաքննիչ բողոքի սահմաններից, հատկապես՝ այն դեպքերում, երբ հայտնաբերում է քրեական հետապնդումը բացառող հանգամանք, քրեական կամ քրեադատավարական օրենքի անվերապահ խախտում, երբ բողոքարկված դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմքը ակնհայտորեն վերաբերում է նաև դատական ակտը չբողոքարկած մեղադրյալին:

#### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Зайцев И. М.** Устранение судебных ошибок в гражданском процессе. Саратов, 1985, с. 38-40.
2. ՀՀ քրեական դատավարության դասագիրք, 3-րդ հրատարակություն, ԵՊՀ հրատ., 2010, էջ 387:
3. Մինչև 27.12.2007թ. գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 385-րդ հոդված:
4. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 399-րդ հոդված:
5. ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու (2010թ. 2-րդ կիսամյակ, 2011թ.) էջ 122 (27.08.2010թ. թիվ ԼԴ/0001/11/10 որոշում):
6. **Ряова Д. Н.** Пробелы в праве и способы их восполнения. - Становление и развитие научных школ права в государственных университетах России: Материалы Всероссийской студенческой научно-практической конференции, 29-30 апреля 1999г. СПб, 1999, с. 22-23. **Зыгайло В. К.** Проблема «пробелов в праве» (К критике буржуазной теории). Киев.
7. Delcourt v. Belgium գործով 1970թ. հունվարի 17-ի վճիռը, գանգատ թիվ 2689/65, կետ 25:
8. ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից 08.06.2012թ. կայացված թիվ ՍԴ/0204/01/11 որոշումը:

## **ГРАНИЦЫ ПЕРЕСМОТРА УГОЛОВНЫХ ДЕЛ В АПЕЛЛЯЦИОННОМ УГОЛОВНОМ СУДЕ РА**

***М. А. АРУТЮНЯН***

Статья посвящена модели апелляции уголовных дел в апелляционном уголовном суде РА. Раскрыты сущность и цель апелляции уголовных дел, предложено внедрение более продуктивной модели, в основе которой лежат особенности отношений, уровень правосознания общества, влияние социально-экономических факторов, различные проявления механизма в законодательстве и апелляции в теории.

## **THE LIMITS OF REHEARING OF CRIMINAL CASES OF THE RA CRIMINAL COURT OF APPEAL**

***М. H. HARUTYUNYAN***

The article on the theme “The limits of rehearing of criminal cases of the RA Criminal Court of Appeal” deals with the RA legislative approach towards the model of limits of the review of criminal cases by the Criminal Court of Appeal and its issues. The essence and aims of rehearing are revealed and the incomplete sides of the models on “The limits of rehearing of criminal cases” are observed in the article which have been adopted by the Code of Criminal procedure and then have been changed. The current issues are revealed in the article and a new model is used which is based on the peculiarities of current relations, the level of public perception of law, the influence of socio-economic factors, different manifestations existing in theory and in Legislation, etc.